ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի որոշում

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ , ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԶԻՆՂԵԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Զինղեկի» գործունեության կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի նախագահ՝ Ա. Ա. Ղուլիջօղլյան

Ընդհանուր դրույթներ

ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի զինղեկի աշխատանքային գործունեության կանոնակարգի համար հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 25.08.1999թ.-ի թիվ 532 որոշման կետի դրույթները, տնօրենի կողմից հաստատված անհատական պլանը:

Զինղեկը՝

1) անմիջականորեն ենթարկվում է ուսումնական հաստատության տնօրենին: Պատասխանատու է սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման, սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների կազմակերպման, ուսումնական զենքի, գործնական պարապմունքների անցկացման ընթացքում անվտանգության կանոնների պահպանման համար, համաձայն «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և նրանից բխող իրավական ակտերի,

2) անձամբ նախապատրաստում և անցկացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը, ղեկավարում է ռազմական գործն ուսումնասիրող խմբակների աշխատանքը,

3) տնօրինում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի կաբինետը, զենքի պահպանման սենյակը, հրաձգային տիրը, «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնանյութատեխնիկական բազան,

4) հաշվառում և պահպանում է ուսումնական զենքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանց փամփուշտները՝ համաձայն «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և նրանից բխող այլ իրավական ակտերի պահանջների,

5) ուսումնական հաստատության ղեկավարության և մանկավարժական կոլեկտիվի հետ համատեղ իրականացնում է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը,

6) սովորողներին մասնակից է դարձնում հրաձգության, ռազմակիրառական մարզաձևերի ու քաղաքացիական պաշտպանության համայնքային, մարզային, հանրապետական մրցումներին,

7) առավելագույնս օգտագործում է գործնական պարապմունքներ անցկացնող ստանձնած զորամասերի հնարավորություններն ու օժանդակությունը՝ «Նախնական

զինվորական պատրաստություն» առարկայի աշխատանքի որակը բարելավելու համար,

8) զինվորական կոմիսարիատների հետ համատեղ ուսումնական հաստատություններում կազմակերպում է բացատրական, քարոզչական աշխատանքներ՝ պատանիների ռազմական մասնագիտություն ընտրելու, ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու նախապատրաստման համար, անհրաժեշտության դեպքում տնօրինության միջոցով ռազմական ուսումնական հաստատության դիմորդ-թեկնածուների համար քննական առարկաներից կազմակերպում է լրացուցիչ պարապմունքներ,

9) մշտապես բարձրացնում է իր մասնագիտական զինվորական և մանկավարժական կրթամակարդակը,

10) քոլեջի կուրսղեկների հետ միասին կազմակերպում է նախազորակոչային տարիքի պատանիների զինվորական հաշվառման (կցագրման) համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը և համագործակցելով զինվորական կոմիսարիատի հետ ապահովում է նրանց ներկայությունը կցագրման տեղամասեր,

11) մասնակցում է զինվորական կոմիսարիատի կողմից կազմակերպվող ուսումնամեթոդական հավաքներին և մեթոդական պարապմունքներին, զորահավաքային աշխատանքներին, ուսումնական հաստատությանը կցված զորամասերի ուսումնական (ցուցադրական) զորավարժություններին:

12) Զինղեկը կարող է ներգրավվել ուսումնական հաստատության հերթապահությանը:

13) Զինղեկն իրականացնում է ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը:

Զինղեկ՝ Մ. Ֆեսչյան